Ահա թէ ինչ է գրում ինձ դոկտ. Ջէվդէթ բէյը.

...

Նրանց հետ, որոնց ձեռքը արատաւորված է արիւնով։ Եւ այդ պահանջում է իրա, Ռուսաստանի շահը, որովհետև դրանով նա ցոյց կը տայ արդարութեան և մարդասիրութեան իդէաներ, որոնք միայն կարող են դրաւել դէպ իրան քաղաքակիրթ աշխարհի համակրութիւնները. դրա մէջ է և նրա նիւթական շահը!!։

Հ. Ա.

## ՄԻ ՆԱՄԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Ահա թէ ինչ է գրում ինձ դոկտ. Ջէվդէթ բէյը.

...

## ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

### XXIV

«Մշակի» ընթերցողները ծանօթացան այն միջադէպի հետ, որ Պարիզում տեղի է ունեցել դօքտոր Լօրիս-Մելիքեանի և պ. Մինաս Չերազի մէջ։

Միջադէպը ցաւալի էր, բայց մենք շատ հեռու էինք մտածելու, որ նա պատճառ կը դառնայ «Արմէնի» (L'Arménie) թերթի դադարման և առիթ կը տայ պ. Մինաս Չերազին ընկնել յուսահատութեան մէջ, և դառնացած հոգով մեղադրել հայերին ապերախտութեան մէջ։ Տասն և ութ տարի հրատարակելով «L'Arménie» թերթը առաջ Լօնդօնում, ապա Պարիզում, նա այս տարվայ յունվար ամսի №-ի մէջ յայտարարում է, որ «վշտահարված այդքան ապերախտութիւնից, դառնացած մեր դէմ յարուցված վերջին ինտրիգայից, մեր ամբողջ հոգին համակվեց մի նոր զգացումով։ Դա ոչ յոգնածութիւն է, ոչ յուսահատութիւն։ Դա մի ուրիշ աւելի անդիմադրելի զգացումն է—զզուանք։ Այս օրվանից «L'Arménie» թերթը այլ ևս չի հրատարակվի»։

Բայց ինչ է պատահել, ինչն է այդքան դառնութիւն և յուսահատութիւն պատճառել պ. Մինաս Չերազին։

...

դոլրդի ծառայութեան համար»։

Դառնացած ոգին և յուսահատութիւնն է, որ խօսում է պ. Չերազի մէջ։ Եւ նրա պէս մի պատկառելի գործիչ չը պէտք է լսէր յուսահատութեան ձայնին, որ լաւ խորհրդատու չէ, որքան էլ ուրիշները դատապարտելի վարմունք ունեցած լինէին նրա հանդէպ։

Բայց հայ գործիչներից որի ճանապարհը փռված է եղել վարդերով. փուշ և դատասկ—ահա սովորական ճանապարհը։ Եւ սակայն անաչառ, անկաշառ պատմութեան պէտք է յանձնէր Մինաս Չերազ իր քառասնամեայ գործունէութեան գնահատութիւնը, և ոչ անսար յուսահատութեան, վհատման ու զզուանքի ձայնին, որոնք, կրկնում ենք, բնաւ լաւ և անաչառ դատաւորներ չեն։ Ջարդարացնելով ամենևին դօքտոր Լօրիս-Մելիքեանի վարմունքը, մենք այնուամենայնիւ գտնում ենք, որ այդ վարմունքը կարող էր միայն հասարակական դատաստանի գնահատութեան ենթարկվել և ոչ ստիպել պ. Չերազին ընդունել մի յուսահատ վճիռ։

Շահրիար

## ԼՈՒԻՋԻ ՎԻԼԱՐԻԻ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ

Վիլլարին, որ մի երկու ամիս առաջ ճանապարհորդեց Անդրկովկասում և ականատես եղաւ Թուրք-հայկական ընդհարումներին, սկսել է մի շարք թղթակցութիւններ տպել անգլիական թերթերի—«Վէստմինիստէր գազէթի» և «Թայմսի» մէջ։ Այսօր առաջ ենք բերում առաջին լրագրի մէջ տպված նրա թղթակցութիւնը,

...

սում». մի ուրիշը՝ «Մի հայկական յաղթութիւն», երրորդը՝ «Daily Chronicle» 11 յունվ. «10,000 թաթար անձնատուր են լինում»։ Իսկ բուն տեղեկութիւնը, որի հիման վրա այդպիսի վերնագիրներ են շարվում. կազմված է հետևեալ կերպով, յենվելով Բագուից եկած ճանապարհորդների խօսքին։

«Տասը հազար թաթար յարձակվել են Թիֆլիսի վրա ջարդելու և կողոպտելու նպատակով։ Հայերը, որոնք լաւ զինված էին և որոնց օգնում էին վրացիք և ռուսները, սաստիկ ընդդիմութիւն ցոյց տուին. նրանք գործ էին ածում բարրիկադներ և ռումբեր և վերջ ի վերջոյ ստիպեցին թաթարներին անձնատուր լինել»։ Ապա խօսվում է Գանձակի և Շուշու դէպքերի մասին, նոյնպէս և անճիշտ կերպով։

Իսկ Թուրքաց թաղում պատահած հրդեհի մասին եւրոպական լրագրներին լուրը հաղորդվում է... Կ. Պօլսից, ևս աւելի սուտ և չափազանցրած քան վերոյիշեալը։

Այդ լուրն էլ տպագրում են լրագիրները՝ «Հայերը փորձում են Թուրքերին կենդանի այրել» և դրա նման ձևերով։ Կ. Պօլսից ուղղված հեռագիրն ասում է։

«Թիֆլիսից դեկտեմբեր 17 (ն. տ.) թւով քաշված մի հեռագիր յայտնում է, թէ մահմեդականաց թաղում երեք հարիւր տուն կրակի են տվել։ Զինված հայերը արգելում են բնակիչներին տանից դուրս գալ և հրացան են արձակում հրդեհաշէջների վրա։ Յիսուն եօթը թուրքահպատակ կորել են (Evening Neues» դեկտ. 19)։

Այս հրէշաւոր լուրի աղբիւրը պէտք է փնտռել Թիֆլիսի Թուրք հիւպատոսարանում, որովհետև մի ուրիշ (լրագրում «Euening Standard» դեկտ. 17) մենք գտնում ենք վե-

...

